


Մի քանի \vec{a} , \vec{b} , \vec{c} , \vec{d} վեկտորների գումարը ստանալու համար գումարվող վեկտորները պետք է գուգահեռ տեղափոխվեն այնպես, որ մեկի սկզբնակետը համընկնի նախորդի վերջնակետին: Այդ դեպքում առաջին վեկտորի սկզբնակետը վերջին վեկտորի վերջնակետին միացնող վեկտորը կլինի գումար վեկտորը:



Վեկտորների գումարման բազմանկյան կանոնը

Մի քանի վեկտորների գումարման վերոնշյալ եղանակն անվանում են վեկտորների գումարման **բազմանկյան կանոն**: